ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» ապրիլի 2025 թվականի N 581

«ՍԻՑԻԼԻԱ ԳԵՅՄՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով, հիմք ընդունելով այն փաստը, որ 07-019-0486-0002 կադաստրային ծածկագրով հողամասը սեփականության և վարձակալության իրավունքով պատկանում է «Սիցիլիա Գեյմս» ՍՊ ընկերությանը և վերջինիս կողմից առանց համապատասխան թույլտվությունների ինքնակամ շինություններ չեն կառուցվել վերոնշյալ կադաստրային ծածկագրով հողամասում **որոշում եմ**.

1. «Սիցիլիա Գեյմս» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել «Սիցիլիա Գեյմս» ՍՊ ընկերությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«22» ապրիլի 2025 թվականի N 580

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 189 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 21-ի «**Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի առանձնացման և պետական գրանցում կատարելու մասին**» թիվ 189 որոշման 1-ին կետում «**0.01687**» թիվը փոխարինել համապատասխան «**0.01282**» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» ապրիլի 2025 թվականի N 579

ՀԱԿՈԲ ԱՇՈՏԻ ԱԲԱՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հ.Աբաջյանի 2025 թվականի ապրիլի 18-ի թիվ 2274/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հակոբ Աբաջյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գ. Բջնի 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 4/1 հասցեում գտնվող օժանդակ շինության գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ **որպես բնակելի տուն**:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«22» ապրիլի 2025 թվականի N 578

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԶԵՂՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 34 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, քննարկելով Չարենցավան համայնք, ք.Չարենցավան 8-րդ թաղամաս, 16-րդ շենք, բնակարան 51 հասցեի բնակիչ Վլադիկ Պողոսյանի 2025 թվականի ապրիլի 18-ի թիվ 2273/16 դիմումը, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, ք.Չարենցավան 8-րդ թաղամաս, 16-րդ շենք, բնակարան 51 հասցեի ներքոհիշյալ բնակիչների համար սահմանել աղբահանության վարձավճարի 100 % զեղչ:

Պողոսյան Վլադիկ
Պողոսյան Էլմիրա

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 01-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«21» ապրիլի 2025 թվականի N 577

ԱՐՄԵՆ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետի 2025 թվականի ապրիլի 11-ի արձանագրության համաձայն Երևան քաղաքի Թերլեմեզյան փողոց 32 տան բնակիչ Արմեն Արիստակեսի Մուրադյանի կողմից Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքում կատարվել է հողային աշխատանքներ՝ առանց համապատասխան թույլտվության՝ խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի» այսուհետ՝ Օրենսգիրք 156-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները, այն է՝ ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Փաստի առթիվ 14.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է համար 557 որոշումը «Քաղաքացի Արմեն Արիստակեսի Մուրադյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025թ. ապրիլի 18-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արմեն Արիստակեսի Մուրադյանը:

Արմեն Արիստակեսի Մուրադյանը մասնակցել է լսումներին և հայտնել, որ իր կողմից կատարել է հողային աշխատանքներ առանց համապատասխան թույլտվության:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով Օրենսգրքի 219.[1]-րդ, 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթները, Չարենցավանի համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2025 թվականի ապրիլի 18-ի թիվ 5 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. **Արմեն Արիստակեսի Մուրադյանին** ենթարկել վարչական պատասխանատվության՝ Օրենսգրքի 156-րդ հոդվածով /1-ին մաս / նախատեսված խախտում թույլ տալու համար և նշանակել վարչական տուգանք 10 000 /տասը հազար / ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Զարենցավան համայնքի 900135101203 հաշվեհամարին:

3. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում գումարը կգանձվի ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«21» ապրիլի 2025 թվականի N 576

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 12-րդ շենքի 47/48 բնակարանի բնակիչ Ալեքսանդր Չիլինգարյանի 2025 թվականի ապրիլի 18-ի թիվ 2276/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի սեպտեմբերի 30-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 12 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 12-րդ շենք 47/48 բնակարան) «Չիլինգարյան Գոհարիկ Սաքոյի» բառերը փոխարինել համապատասխան «Չիլինգարյան Գոհարիկ Սահակի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» ապրիլի 2025 թվականի N 575

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1807 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 22-ի «**Համայնքային հողամասում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին»** թիվ 1807 որոշման 2-րդ կետում «**44.9**» թիվը փոխարինել համապատասխան «**43.5**» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«18» ապրիլի 2025 թվականի N 574

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԿԻՆ ՏԵՍՔԻ ԲԵՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 31.03.2025թ. համար ՔՏՄ/13.6/8727-25 գրության 07-019-0486-0005 կադաստրային ծածկագրով հողամասը հանդիսանում է պետական սեփականություն հանդիսացող անտառային գոտու հողամաս, որը Արա Ֆելիքսի Սահակյանը վարձակալել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ից, և 06.06.2008թ. թիվ 4140 անտառային հողերի վարձակալության պայմանագրով /30.06.2014թ. թիվ 869 և 09.03.2020թ. թիվ 3662 համաձայնագրերով պայմանագրի ժամկետը երկարաձգվել է/ հատկացված տարածքում կառուցվել են ինքնակամ բետոնե շինություններ:

Փաստի առթիվ 03.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է համար 506 որոշումը «Քաղաքացի Արա Սահակյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025թ. ապրիլի 10-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արա Ֆելիքսի Սահակյանը:

Արա Ֆելիքսի Սահակյանը մասնակցել է լսումներին և հայտնել, որ իր կողմից վարձակալած տարածքում 06.06.2008թ. դրությամբ առկա է եղել պետության կողմից կառուցված շինություններ՝ մասնավորապես մետաղյա կոնստրուկցիաներով կառուցված տաղավարներ և անցուղիներ, իսկ մնացած շինությունները՝ թվով երկու տաղավարները, արդեն գոյություն ունեցող բետոնե հիմքերի վրա կառուցվել է իր կողմից /բետոնե հիմքերը կառուցվածեն պետության կողմից/:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. 31.03.2025թ. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թիվ ՔՏՄ/13.6/8727-25 գրությունը իրականացված ինքնակամ շինությունների վերաբերյալ:

բ.03.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի համար 506 որոշմամբ վարչական վարույթ հարուցվելու փաստը:
գ.Առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերոնշված շինությունները գտնվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում, հանդիսանում են պետական սեփականություն:
դ.Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի կողմից կատարված տեղատեսության ժամանակ կատարված լուսանկարները:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու:Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները...»:

«...Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը...»:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝
ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պատվիրակված լիազորություն.
1) համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում իրավախախտումը կատարվել է 31.03.2025թ. առաջ մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 31.03.2025թ. համար ՔՏՄ/13.6/8727-25 գրությունը ուղված Չարենցավան համայնքի ղեկավարին:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 58-րդ և 60-րդ հոդվածների, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման 2-րդ կետի ա) և բ) ենթակետի դրույթները.

ՈՐՈՇԵՑԻ

1. Ապամոնտաժել՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Արա Ֆելիքսի Սահակյանի կողմից պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մասին 06.06.2008թ թիվ 4140 պայմանագրով վարձակալված տարածքում ինքնակամ կառուցված թվով երկու տաղավարները և պետական սեփականություն հանդիսացող հողամասը բերել նախկին տեսքի:
2. Որոշումն ի կատար ածելու համար ուղարկել հողամասի կառավարումն իրականացնող «Հայանտառ» ՊՈԱԿ-ին:
3. Առաջարկել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Չարենցավանի բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ «Հայանտառ» ՊՈԱԿ -ի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառվելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
4. Արա Ֆելիքսի Սահակյանին ազատել վարչական պատասխանատվությունից վարչական տույժ նշանակելու ժամկետը լրացած լինելու հիմքով:
5. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը փոխհատուցում է ինքնակամ կառույցն իրականացրած անձը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Չարենցավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» ապրիլի 2025 թվականի N 573

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԿԻՆ ՏԵՍՔԻ ԲԵՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 31.03.2025թ. համար ՔՏՄ/13.6/8727-25 գրության 07-008-0282-0180 կադաստրային ծածկագրով հողամասը հանդիսանում է պետական սեփականություն հանդիսացող անտառային գոտու հողամաս, որը Համլետ Գևորգի Աբրահամյանը վարձակալել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ից, և 24.07.2015թ. անտառային հողերի վարձակալության պայմանագրով /28.10.2020թ. թիվ 1876 համաձայնագրով պայմանագրի ժամկետը երկարաձգվել է/ հատկացված տարածքում կառուցվել են ինքնակամ բետոնե շինություններ:

Փաստի առթիվ 03.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է համար 508 որոշումը «Քաղաքացի Համլետ Գևորգի Աբրահամյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025թ. ապրիլի 10-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Համլետ Գևորգի Աբրահամյանը:

Համլետ Գևորգի Աբրահամյանը մասնակցել է լսումներին և հայտնել, որ վարձակալած տարածքում իր կողմից կառուցվել է սանհանգույց և անցուղի:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. 31.03.2025թ. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թիվ ՔՏՄ/13.6/8727-25 գրությունը իրականացված ինքնակամ շինությունների վերաբերյալ:

բ. 03.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի համար 508 որոշմամբ վարչական վարույթ հարուցվելու փաստը:

գ.Առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերոնշված շինությունները գտնվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում և հանդիսանում են պետական սեփականություն:

դ.Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի կողմից կատարված տեղատեսության ժամանակ կատարված լուսանկարները:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու:Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները...»:

«...Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը...»:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պատվիրակված լիազորություն.

1) համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում իրավախախտումը կատարվել է 31.03.2025թ. առաջ մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական

մարմնի ղեկավարի տեղակալի 31.03.2025թ. համար ՔՏՄ/13.6/8727-25 գրությունը ուղված Չարենցավան համայնքի ղեկավարին:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 58-րդ և 60-րդ հոդվածների, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման 2-րդ կետի ա) և բ) ենթակետի դրույթները.

ՈՐՈՇԵՑԻ

1. Ապամոնտաժել՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Համլետ Գևորգի Աբրահամյանի կողմից պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մասին 24.07.2015թ. պայմանագրով վարձակալված տարածքում ինքնակամ կառուցված սանհանգույցը, անցուղին և պետական սեփականություն հանդիսացող հողամասը բերել նախկին տեսքի:
2. Որոշումն ի կատար ածելու համար ուղարկել հողամասի կառավարումն իրականացնող «Հայանտառ» ՊՈԱԿ-ին:
3. Առաջարկել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Չարենցավանի բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ «Հայանտառ» ՊՈԱԿ -ի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառվելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
4. Համլետ Գևորգի Աբրահամյանին ազատել վարչական պատասխանատվությունից վարչական տույժ նշանակելու ժամկետը լրացած լինելու հիմքով:
5. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը փոխհատուցում է ինքնակամ կառույցն իրականացրած անձը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Չարենցավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» ապրիլի 2025 թվականի N 572

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԿԻՆ ՏԵՍՔԻ ԲԵՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 31.03.2025թ. համար ՔՏՄ/13.6/8727-25 գրության 07-008-0282-0179 կադաստրային ծածկագրով հողամասը հանդիսանում է պետական սեփականություն հանդիսացող անտառային գոտու հողամաս, որը Ծովինար Իշխանի Ադամյանը վարձակալել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ից, և 22.05.2015թ. անտառային հողերի վարձակալության պայմանագրով հատկացված տարածքում կառուցվել են ինքնակամ բետոնե շինություններ:

Փաստի առթիվ 03.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է համար 507 որոշումը «Քաղաքացի Ծովինար Ադամյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025թ. ապրիլի 10-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Ծովինար Իշխանի Ադամյանը, սակայն նիստին չի ներկայացել:

Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից 16.04.2025թ. ընդունվել է «Քաղաքացի Ծովինար Իշխանի Ադամյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 562 որոշումը: 2025թ. ապրիլի 18-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցել է Ծովինար Իշխանի Ադամյանի կողմից լիազորված Կարեն Տարոնի Եփրեմյանը:

Կարեն Տարոնի Եփրեմյանը /լիազորված անձ/ մասնակցել է լսումներին և հայտնել, որ վարձակալած տարածքում Ծովինար Իշխանի Ադամյանի կողմից կառուցվել է բետոնե հիմքով փայտյա տաղավարներ:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. 31.03.2025թ. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թիվ ՔՏՄ/13.6/8727-25 գրությունը իրականացված ինքնակամ շինությունների վերաբերյալ:

բ. 03.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի համար 507 որոշմամբ վարչական վարույթ հարուցվելու փաստը:
գ. 16.04.2025թ. Չարենցավան համայնքի ղեկավարի համար 562 որոշմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու փաստը:
դ.Առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերոնշված շինությունները գտնվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում և հանդիսանում են պետական սեփականություն:
ե.Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի կողմից կատարված տեղատեսության ժամանակ կատարված լուսանկարները:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու:Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները...»:

«...Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը...»:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝
ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պատվիրակված լիազորություն.
1) համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և

տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում իրավախախտումը կատարվել է 31.03.2025թ. առաջ մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 31.03.2025թ. համար ՔՏՄ/13.6/8727-25 գրությունը ուղված Չարենցավան համայնքի ղեկավարին:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 58-րդ և 60-րդ հոդվածների, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման 2-րդ կետի ա) և բ) ենթակետի դրույթները.

ՈՐՈՇԵՑԻ

1. Ապամոնտաժել՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Ծովինար Իշխանի Ադամյանի կողմից պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մասին 22.05.2015թ. պայմանագրով վարձակալված տարածքում ինքնակամ կառուցված բետոնե հիմքով փայտյա տաղավարները և պետական սեփականություն հանդիսացող հողամասը բերել նախկին տեսքի:
2. Որոշումն ի կատար ածելու համար ուղարկել հողամասի կառավարումն իրականացնող «Հայանտառ» ՊՈԱԿ-ին:
3. Առաջարկել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Չարենցավանի բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ «Հայանտառ» ՊՈԱԿ -ի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառվելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
4. Ծովինար Իշխանի Ադամյանին ազատել վարչական պատասխանատվությունից վարչական տույժ նշանակելու ժամկետը լրացած լինելու հիմքով:
5. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը փոխհատուցում է ինքնակամ կառույցն իրականացրած անձը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Չարենցավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլ 2025 թվականի N 571

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Ադամյան	Վալերիկ	AR0259196	20000	դրամ
Վարդանյան	Փոփոլ	AV0662592	20000	դրամ
Ադամյան	Անգին	AU0445409	20000	դրամ
Մկրտչյան	Հարություն	AP0356865	10000	դրամ
Սարգսյան	Նեկտար	AU0579987	10000	դրամ
Սեդրակյան	Քնարիկ	AL0560439	10000	դրամ
Ղահրամանյան	Ռոզա	AT0210951	10000	դրամ
Պետրոսյան	Լյուսյա	AR0323955	10000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2025 թվականի N 570

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Ընտանեկան օրենսգրքի» 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, քննարկելով Աիդա Գրիշայի Բատիկյանի 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 2226/14 դիմումը, հիմք ընդունելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 18-ի թիվ 13 նիստի արձանագրությունը և հաշվի առնելով, որ անչափահաս երեխաների իրավունքները խախտված չեն ***որոշում եմ.***

1. Քանի որ հանգուցյալ Միեր Վարդգեսի Բագրատյանի ժառանգական զանգվածը ծանրաբեռնված է պարտավորություններով և առկա են պարտատերերի դիմումներ, տալ համաձայնություն, որ անչափահասներ ***Լեո Միերի Բագրատյանի*** /ծնված 28.08.2016թ./, ***Ալեքսանդր Միերի Բագրատյանի*** /ծնված՝ 28.08.2016թ./ և ***Մարիա Միերի Բագրատյանի*** /ծնված՝ 28.08.2016թ./ ի փոխարեն վերջիններիս մայրը՝ ***Աիդա Գրիշայի Բատիկյանը /ծնված՝ 18.04.1982թ./*** ընդունի ժառանգությունը, գրանցման ներկայացնի սեփականության իրավունքը և կատարի դրանից բխող ցանկացած գործողություն:

2. Տալ համաձայնություն, որ անչափահասներ ***Լեո Միերի Բագրատյանին*** /ծնված 28.08.2016թ./, ***Ալեքսանդր Միերի Բագրատյանին*** /ծնված՝ 28.08.2016թ./ և ***Մարիա Միերի Բագրատյանին*** /ծնված՝ 28.08.2016թ./ պատկանող Երևան քաղաքի Բաբաջանյան 15/2 հասցեում գտնվող անշարժ գույքը վերջիններիս մոր՝ ***Աիդա Գրիշայի Բատիկյանի /ծնված՝ 18.04.1982թ./*** կողմից որոշված գնով և պայմաններով օտարվի, ինչպես նաև վերջինիս կողմից հետագայում վաճառքից առաջացած գումարը տնօրինվի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» ապրիլի 2025 թվականի N 569

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 08-Ի ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 11-րդ թաղամաս, 1-ին շենք բնակարան 21 հասցեի բնակիչ Ալվետ Աղայանի 2025 թվականի ապրիլի 17-ի թիվ 2271/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 08-ի «Պետական, հանրային և համայնքային բնակ ֆոնդի բնակարանների անհատույց սեփականաշնորհում թույլատրելու մասին» թիվ 17 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 11-րդ թաղամաս 1-ին շենք 21 բնակարան) ***«Աղայան Մարգարիտա»*** բառերը փոխարինել համապատասխան ***«Աղայան Մարգարիտ»*** բառերով, իսկ ***«Աղայան Զվարդ»*** բառերը փոխարինել համապատասխան ***«Աղայան Զվարթ»*** բառերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» ապրիլի 2025 թվականի N 568

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Արկադյա Օհանջանյանի կողմից ինքնակամ կառուցված 96.75 քմ արտաքին մակերեսով շինությունները, որից՝ 35.1 քմ արտաքին մակերեսով ավտոտնակ, 61.65 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինություն, և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023K8RFRU ծածկագրի:
2. Շինությունների սպասարկման նպատակով հատկացնել 70.65 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Երիտասարդության փողոց 1-ին փակուղի թիվ 4/15*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արկադյա Օհանջանյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» ապրիլի 2025 թվականի N 567

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Սարգիս Բաբուրյանի կողմից ինքնակամ կառուցված 53.43 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Տիգրան Փոթիկյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023VVTUK6 ծածկագրի:
2. Տնտեսական շինության սպասարկման նպատակով հատկացնել 53.43 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել. ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 7-րդ փողոց թիվ 13/1*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Սարգիս Բաբուրյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«17» ապրիլի 2025 թվականի N 566

ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 2-րդ կետի պահանջներով և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 16-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու սեփականության իրավունքով ***Արա Ղազարյանին*** պատկանող **Չարենցավան քաղաք Մ. Խորենացու փողոց 1-ին փակուղի թիվ 3** հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 07-007-0044-0017 կադաստրային ծածկագրով 36.0 քմ մակերեսով հողատարածքը՝ 105000 ՀՀ դրամով:

2. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ Բ. Բալբաբյանին հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արա Ղազարյանի*** հետ կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» ապրիլի 2025 թվականի N 565

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 1770 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 14-ի «**Համայնքային հողամասում գտնվող ինքնակամ կառուցված առևտրի սրահը համայնքային սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին»** թիվ 1770 որոշման 1-ին կետում «**54.4»** թիվը փոխարինել համապատասխան **«26.5»** թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**